ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի մայիսի 13-ի, ժամը 14:00-ի նիստի
N 11 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Պրոֆեսորի գիտական կոչում հայցելու նպատակով գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցելու համար **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության դոկտոր Արարատ Դվինի Գոմցյանի** ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան:**

Զեկուցողը նշեց. Ա.Դ.Գոմցյանը 2009 թվականի հոկտեմբերի 14-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնում՝ ժամավճարային կարգով. նախ՝ 14.10.2009-01.07.2011՝ պրոֆեսորի պաշտոնակատար, 01.09.2011-01.07.2019՝ պրոֆեսոր, իսկ 2019 թվականի սեպտեմբերի 2-ից՝ դոցենտ: Վերջին 5 ուսումնական տարվա ընթացքում անընդմեջ իրականացրել է հայցվող գիտական կոչման մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն:

Ա.Դ.Գոմցյանը գիտամանկավարժական աշխատանքին զուգահեռ աշխատել է պետական կառավարման համակարգում: 1978-1986 թթ. եղել է ՀՀ կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի պատասխանատու աշխատող, 1986-1990 թթ. եղել է ՀԿԿ Աշոցքի (Ղուկասյան) շրջանային կոմիտեի առաջին քարտուղար (երկրաշարժի գոտի), 1990-1995 թթ.՝ ՀՀ բնակարանային կոմունալ տնտեսության հանրապետական կոմիտեի նախագահ: 1996-1999 թթ. եղել է Շիրակի մարզի առաջին մարզպետ, 1999-2003 թթ.՝ ՀՀ կառավարության կենտրոնական ապարատի օպերատիվ կառավարման գլխավոր վարչության պետ, վարչապետի խորհրդական, 2003-2016 թթ.՝ Ռուսաստանի Դաշնության Հարավային դաշնային տարաշաճրջանում ՀՀ առաջին գլխավոր հյուպատոս: Ա.Դ.Գոմցյանը 1990-1995 թթ. եղել է ՀՀ ԳԽ առաջին գումարման պատգամավոր, 1995-1999 թթ.՝ ՀՀ Ազգային ժողովի առաջին գումարման պատգամավոր, ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ:

1990-1994 թթ. Ա.Դ.Գոմցյանը մասնակցել է Արցախից բռնագաղթվածների տեղավորման, նյութական օգնության կազմակերպման, Ստեփանակերտի, Շուշիի, Խոջալու-Իվանյանի, Գորիսի, Ղափանի, Վարդենիսի, Ճամբարակի շրջանների պատերազմական գործողություններից տուժած բնակավայրերի վերականգնման աշխատանքների կազմակերպման գործընթացին: Զանգվածային լրատվական միջոցներում, գիտական համաժողովներում և տարբեր հանդիպումներում հանդես է եկել հայ-ռուսական հարաբերությունների զարգացման և տնտեսական համագործակցության թեմաներով:

Ա.Դ.Գոմցյանը 2005 թվականից Ռուսաստանի Դաշնության բնական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ է, 2012 թվականից՝ Դոնի Ռոստովի պետական տնտեսագիտական համալսարանի պատվավոր պրոֆեսոր: Պարգևատրվել է Հայաստանի Հանրապետության, Արցախի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության պետական պարգևներով:

Ա.Դ.Գոմցյանը 1978 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2002 թվականին ՀՀ ԲՈԿ-ի կողմից նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում: 2005 թվականին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և ստացել տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան: Դոկտորական ատենախոսություն պաշտպանելուց հետո նա տվյալ բնագավառում ունի հրատարակված ինչպես գիտական, այնպես էլ ուսումնամեթոդական աշխատանք, որոնց ընդհանուր թիվը 29 է (1 մենագրություն, 1 կոլեկտիվ մենագրություն, 1 ուսումնական ձեռնարկ՝ համահեղինակությամբ, 19 գիտական հոդված՝ տպագրված միջազգային գիտական ամսագրերում (այդ թվում 4-ը՝ համահեղինակությամբ), 7 գիտական հոդված՝ տպագրված ՀՀ գիտական ամսագրերում (այդ թվում 1-ը՝ համահեղինակությամբ): Աշխատությունները վերաբերում են ՀՀ արտաքին առևտրատնտեսական հարաբերությունների զարգացմանը, միջազգային կապերի բնագավառում կառավարման նոր ձևերի և Հայաստանում դրանց կիրառմանը:

Ա.Դ.Գոմցյանի գիտական ղեկավարությամբ պաշտպանվել և ՀՀ ԲՈԿ-ի կողմից հաստատվել է մեկ թեկնածուական ատենախոսություն: Նա ունի տեսական ու գործնական խոր գիտելիքներ, բարձր մակարդակով ղեկավարում է ավարտական աշխատանքներ և մագիստրոսական թեզեր: Իր կատարած դրական և արդյունավետ աշխատանքի շնորհիվ վայելում է գործընկերների և ուսանողների հարգանքը:

Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնը (միաձայն) և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովը միաձայն (կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) երաշխավորել են Ա.Դ.Գոմցյանին՝ մասնակցելու գիտական

խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը պրոֆեսորի գիտական կոչում հայցելու նպատակով:

Քվեարկության արդյունքներն են. գիտական խորհրդի 60 անդամից նիստին և քվեարկությանը մասնակցել են 46-ը: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 41, դեմ՝ 4, անվավեր քվեաթերթիկ՝ 1:

ՈՐՈՇԵՑԻՆ.- **1.** Հաշվի առնելով, որ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության դոկտոր Արարատ Դվինի Գոմցյանի** կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատասխանում է ՀՀ կառավարության՝ 2022 թվականի փետրվարի 17-ի N 177-Ն որոշմամբ նոր խմբագրությամբ շարադրված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի» (հաստատված ՀՀ կառավարության 2001 թվականի հուլիսի 9-ի N 615 որոշմամբ) 3-րդ գլխի 6-րդ կետի 1-ին ենթակետի ա. պարբերության պահանջներին՝ **Արարատ Դվինի Գոմցյանին** շնորհել **պրոֆեսորի** գիտական կոչում **«Տնտեսագիտություն»** բնագավառի **Ը.00.06՝ «Միջազգային տնտեսագիտություն»** մասնագիտությամբ:

2. Միջնորդել Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեին՝ հաստատելու համալսարանի գիտական խորհրդի որոշումը:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2022 թ. մայիսի 13
Երևան